

ՈՌԻՍԼԱՆ Ա. ՑԱԿԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, պ.գ.թ.,

rooslantsakanyan@gmail.com

ID 0009-0003-6148-0933

DOI:10.59523/1829-4596.2025.1(30)-26

ԹԻԳԼԱԹՊԱԼԱՍԱՐ Ի-Ի ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՌԱԶՄԱՐՉԱՎԱՆԵՐԸ. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Ամփոփում

Միջինասորեստանյան (Ք.ա. մոտ XV դ. վերջին քառորդ – X դ. առաջին կես) պետության վերջին հզորագույն արքաներից մեկի՝ Թիգլաթպալասար (Tukultī-apil-Ešarra) Ի-ի (Ք. ա. 1114-1076) կառավարման ընթացքում պետության համար ռազմավարական մեծ նշանակություն ուներ նրա հյուսիսային և հյուսիսարևմտյան սահմանների անվտանգությունը։ Սեպագիր աղբյուրների վերլուծությամբ փորձ է արվում վերանայել դեպի Հայկական լեռնաշխարհ և արևելափոքրասիական տարածաշրջան նրա արշավանքների ռազմավարական ու տնտեսական նպատակները և բացահայտել դրանց պատմական նշանակությունը։ Թիգլաթպալասարի Ի-ի հյուսիսային արշավանքներն իրականացվում էին կանխամտածված նվաճողական ռազմա-

* Ներկայացվել է 30.V.2025 թ., գրախոսվել է 07.VI.2025 թ., ընդունվել է դպագրության 20.VI.2025 թ.։

վարությամբ և ուղղված էին առևտրական ուղիների ապահովմանը, արժեքավոր ռեսուլսների հասանելիությանը և տարածաշրջանի մանր ու միջին պետությունների վրա ասորեստանցիների գերակայության հաստատմանը:

Բանալի բառեր՝ Միջին Ասորեստան, Թիգլաթպալասար I, Հայկական լեռնաշխարհ, Վերին Եփրատ, ռազմարշավ, Նաիրի, մուշկեր:

Ներածություն

Իր մոտ քառասունամյա գահակալության ընթացքում Թիգլաթպալասար I-ը բազմաթիվ ռազմարշավներ իրականացրեց, որոնք ընդլայնեցին ասորեստանցիների ազդեցությունը մի քանի ուղղություններով: Դեպի արևմուտք, արևելք և հարավ նրա ռազմարշավներն արժանացել են գիտնականների զգալի ուշադրությանը, մինչդեռ հյուսիսային արշավանքները լրացուցիչ ռատումնասիրության կարիք ունեն: Ասորեստանի համար իր հյուսիսային սահմանները գրեթե միշտ կարևորվում էին տարածքային ընդլայման և ռեսուլսների հայթայթման լայն հնարավորությունների առումներով:

Հյուսիսային արշավանքների ռատումնասիրությունը թույլ է տալիս պատկերացում կազմելու Ասորեստանի ծավալապաշտական հայեցակետի մասին՝ բարդ և լեռնային տարածքներում ռազմական գործողությունների մարտավարության, նյութատեխնիկական պլանավորման ու ապահովման, ծավալապաշտական քաղաքականությունն արդարացնող գաղափարախոսական խոսույթի արմատա-

վորման և այլն: Թիգլաթպալասար I-ի հյուախսային ռազմարշավները փաստացի ավելին էին, քան պարզապես պատեհապաշտական արշավանքներ և համահունչ էին Ասորեստանի ռազմավարական տեսլականին:

Միջինասորեստանյան ժամանակաշրջանում (Ք. ա. մոտ 1416–935¹) Ասորեստանը փոքրիկ քաղաք-պետությունից վերածվեց տարածքային, ապա և տարածաշրջանային խոշոր պետության: Աշշուր-ութալիտ I-ի (Ք. ա. մոտ 1362–1327) կառավարման ընթացքում Ասորեստանը ոչ միայն դուրս եկավ իր սահմաններից և անցավ հարձակման, այլև սկսեց միջամտել հարևան Երկրների ներքին գործերին: Ասորեստանը Աշշուր-ութալիտ I-ի հաջորդների և, մասնավորապես, Արդադ-Նիրարի I-ի (Ք. ա. մոտ 1304–1273), Շումանու-աշարեդ (Սալմանասար) I-ի (Ք. ա. մոտ 1272–1243) և Թուկուլսի-Նինուրտա I-ի (մ.թ. ա. մոտ 1242–1206) օրոք հասավ իր հզորության գագաթնակետին²: Սակայն, հենց Թուկուլսի-Նինուրտա I-ի կառավարման վերջին շրջանում և հաջորդող տասնամյակների ընթացքում իշխանության աստիճանական թուլացում էր նկատվում: Արդեն, Թիգլաթպալասար I-ի հոր՝ Աշշուր-ուեշ-իշի I-ի (մ.թ. ա. մոտ 1132–1115) կառավարման ընթացքում, Ասորեստանը պայքարում էր իր իսկ սահմանների անվտանգության համար: Ք. ա. XII–XI դդ. Մերձավոր Արևելքում տեղի են ունենում բնակլիմայական կտրուկ փոփոխություններ, որոնցով պայմանա-

¹ Թվագրումների համար մանրամասն տե՛ս՝ **Յականյան**. 2023:

² Reculeau. 2022, 725–786; Shibata. 2023, 161–183; Liverani. 2013, 347–363; **Յականյան**. 2018, 19–29:

վորված կտրուկ նվազում են Եփրատ և Տիգրիս գետերի մակարդակները: Ծանր տնտեսական պայմաններն ու հաճախակի դարձած ամորեական ցեղերի ասպատակությունները տարածաշրջանում սրում և գրեթե քայլայման եզրին են հասցնում սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունները³: Այս ամենն իր հերթին հանգեցնում է մերձավորարևելյան քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի ճգնաժամի⁴: Ք.ա. մոտ 1180 թ. Խաթթիի տրոհումից հետո Փոքր Ասիայում և գրեթե ողջ արևելափոքրասիական տարածքներում առաջանում է քաղաքական վակուում: Բնակչիմայական պայմանների փոփոխության պատճառով ժողովուրդների տեղաշարժերը պետք է զգալիորեն վերափոխեին արևելափոքրասիական, հյուախ-սիրիական և Հայկական լեռնաշխարհի արևմտյան ու հարավ-արևմտյան տարածքների ժողովոդագրական լանդշաֆտը⁵: Եվ, բնականաբար, ասորեստանյան արքաներն այդ ժողովուրդների Ասորեստան ներթափանցումը կանխելու բավականին լուրջ խնդիր ունեին: Այս խիստ անկայուն իրավիճակը թե՛ նոր մարտահրավերներ, թե՛ նոր հնարավորություններ էր ստեղծում ասորեստանյան ծավալապաշտական նկրտումների համար:

Մուշկերի սպառնալիքի ժամանակավոր կասեցումը Թիգլաթպալասար I-ն իր արքայական տարեգրութ-

³ Յականյան. 2018, 29:

⁴ Քոսյան, Գրեկյան. 2024, 192-254; Քոսյան. 1999, 81-138:

⁵ Քոսյան. 2022, 206-213; Bryce. 2012, 12-31.

յուններում (հիմնականում գրվել են Ք.ա. մոտ 1109-1092)⁶ նշում է, որ ինքը ևս մեկ անգամ Եփրատը դարձրել է Աշ-շուրի պետության սահմանը՝ արշավելով Եփրատի ձախ ափին տեղակայված արամեական ախլամու ցեղերի դեմ⁷. «Սուլիու երկրի ծայրից մինչև Խաթթի երկրի Քարքեմիշ քաղաքը, մեկ օրում ես թալանեցի»⁸: Նա նշում է նաև, որ հատել է Եփրատը⁹, և Զեբել Բիշորի բնակավայրում հարձակվել արամեացիների վրա: Նա վերանվաճում է մուշկերի ենթակայության տակ անցած տարածքները, արշավում Կաղմովսի և Նահրի, պատերազմ է մղում Բաբելոնիայում, ապա և հասնում մինչև Միջերկրական ծով:

Ասորեստանի արքան իր գահակալության առաջին իսկ տարում ռազմարշավ է կատարում դեպի Հայկական լեռնաշխարհ: Ասորեստանյան զորքերը ներխուժում են Կաղմովսի՝ Տուր Աբդինից հարավ-արևելք և Տիգրիսից արևելք գտնվող հարթավայր¹⁰ ու շարժվում մուշկերի դեմ¹¹: Մինչ այս մուշկերը նախ գրավել էին Ալզին ու Պուրուպումզին, ապա մուշկերի 20 հազարանոց բանակը 5 արքաների առաջնորդությամբ գրավել էր Կաղմովսին: Պարտության

⁶ **Shibata.** 2023, 168.

⁷ **Քոսյան, Գրեկյան.** 2024, 231-232:

⁸ **Grayson.** 1991, A.0.87.1, col. v, ll. 48-50.

⁹ Ընդհանրապես նշում է, որ 14 տարվա ընթացքում՝ 28 անգամ հատել է Եփրատը՝ «քսանութ անգամ, երկու անգամ մեկ տարվա ընթացքում»՝ **Grayson.** 1991, A.0.87.3, ll. 29-30; A.0.87.4, l. 34.

¹⁰ **Genç, MacGinnis.** 2023, 3-4; **Radner.** 2006, 284; **Mayer.** 1995, 235-236.

¹¹ **Քոսյան, Գրեկյան.** 2024, 231-232; **Kosyan.** 2023; **Bryce.** 2012, 40, 197-199; **Wittke.** 2004, 130-184; **Քոսյան.** 1999, 157-160; **Kosyan.** 1997.

մատնելով մուշկերին, Թիգլաթպալասար I-ը ողջ մնացած 6 հազար մարդու թույլատրում է բնակվել իր երկրում, հավանաբար հենց Կադմովսիում¹²: Վերջինս հնագանդվեց միայն Ասորեստանի կրկնակի արշավանքի արդյունքում¹³:

Կադմովսին հնագանդեցնելուց հետ ասորեստանցիներին հաջողվեց կոտրել լեռնային Բարխու երկրի դիմադրությունը¹⁴: Այդ երկիրը հավանաբար տարածվել է Վանա լճից հարավ-արևմուտք¹⁵: Ասորեստանյան բանակը հաջորդ հարվածը հասցրեց Հայկական լեռնաշխարհի հարավ և հարավարևմտյան շրջաններին: Այն ներխուժեց Շուբրու (Շուբրարու) երկիր, գրավեց Վերին Տիգրիսի հովտի հյուսիսային տարածքը, հպատակեցնելով նաև Ալզին ու Պուրովումզին՝ իրենց հարակից տարածքներով¹⁶: Այստեղ նոյնպես ասորեստանցիների դեմ պայքարում էին մուշկերը:

Մուշկերի դեմ Ասորեստանի տարած հաղթանակները գործնականում նախադրյալներ ստեղծեցին մի շարք ռազմավարական նպատակների իրականացման համար. 1) դրանք ապահովեցին ասորեստանցիների մուտքը դեպի Տավրոսի մետաղներով հարուստ շրջաններ, 2) հսկողության տակ վերցրեցին Միջագետքը Փոքր Ասիային կապող առևտրային ուղիները, 3) տարածաշրջանի մանր ու միջին

¹² **Grayson.** 1991, A.0.87.1, col. I, ll. 62-88; **Քոսյան, Գրեկյան.** 2024, 232:

¹³ **Grayson.** 1991, A.0.87.1, col. III, ll. 7-31.

¹⁴ **Grayson.** 1991, A.0.87.1, col. I, l. 89-col. II, l. 35.

¹⁵ **Shibata.** 2023, 173-174.

¹⁶ **Grayson.** 1991, A.0.87.1, col. II, ll. 63- col. III, 61.

Երկրների նկատմամբ ի ցույց դրեցին Ասորեստանի ռազմական գերազանցությունը, 4) աղջավանքները հնարավորություն ընձեռեցին ծեռք բերել ծիեր, իսկ մուշկերի գերեվարման ու վերաբնակեցման արդյունքում՝ նաև զինուժ:

Նվաճված տարածքներում ասորեստանցիները ոչ միայն զանգվածային տեղահանությունների ու վերաբնակեցումների քաղաքականություն էին վարում, այլև ռազմական հենակետեր էին ստեղծում:

Նախրիի Էթնոաշխարհագրական նկարագիրը

Արձանագրություններում Նախրյան Երկրների տարածքը ներկայացված է որպես բարձր լեռներով, խոր հովիտներով և կիմայական ծայրահեղություններով մի շրջան, որն ասորեստանցիներին ռազմական գործողությունների համար զգալի մարտահրավերներ էր ներկայացնում: Նախրյան Երկրներն ամենայն հավանականությամբ գտնվել են Տավրոսի լեռնաշղթայից հյուսիս ընկած տարածքներում, մինչև Արածանիի և Վանա լճի ավազան, ներառելով Մեծ Հայքի առնվազն Ծոփք և Տուրութերան նահանգներն ու դրանց հարող շրջանները¹⁷: Այդ հսկայական տարածքում փաստացի չկար մեկ միասնական քաղաքական միավոր: Վերջինիս փոխարեն հաճախ հիշատակվում են բազում փոքր իշխանություն/թագավորություններ կամ ցեղային համադաշնություններ: Թիգլաթպալասար I-ը նշում է, որ անցել է 16 հզոր լեռներ «16 KUR.MEŠ-ni dan-nu-

¹⁷ **Tsakanyan.** 2023, 7; **Ցականյան.** 2023, 67-68; **Salvini.** 1998, 87-88, **Diakonoff.** 1984, 48.

*te»¹⁸ և բախվել Նահրյան 23 Երկրների արքաների հետ՝ «PAP 23 LUGAL.MEŠ-*nu* KUR. KUR Na-i-ri»¹⁹: Եթե Թուկուտի-Նինուրտա I-ի արձանագրություններում Նահրին հանդես էր գալիս 40 արքաների համադաշնությամբ²⁰, ապա Թիգլաթպալասար I-ի ժամանակներում դրանց թիվը հասնում է 60-ի²¹: Այս ամենը վկայում է տարածաշրջանի քաղաքականապես մասնատված լինելու մասին:*

Նահրյան Երկրների բնակչության էթնիկական կազմն ու լեզվական պատկանելիության հարցը շարունակում է մնալ քննարկման առարկա: Տիրապետող է այն կարծիքը, որ տվյալ ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհն ունեցել է տարաեթանիկ բնակչություն՝ խորիս կանոնավոր հնդեվրոպական լեզվակիրներով²²:

Նահրյան ռազմարշավների նպատակներն ու արդյունքները

Նահրյան Երկրների դեմ Թիգլաթպալասար I-ը ձեռնարկել է Երեք ռազմարշավ՝ «3-ըն առa KUR Na-i-ri DU»²³, որոնցից առաջինը Ք. ա. մոտ 1112 թ., Երկրորդը՝ Ք. ա.

¹⁸ **Grayson.** 1991, A.0.87.1, col. IV, l. 65, արքան նշում է, որ որպեսզի ասորեստանյան մարտակառքերը կարողանային անարգել անցնել այդ լեռնային տարածքներում, հրամայել է պղնձե բրիչներով հարթեցնել տեղանքը:

¹⁹ **Grayson.** 1991, A.0.87.1, col. IV, l. 83.

²⁰ **Grayson.** 1987, A.0.78.23, l. 46.

²¹ **Grayson.** 1991, A.0.87.1, col. IV, l. 46.

²² **Diakonoff.** 1984, 6-8, 13-14, 42-45; հմնտ.՝ **Genç, MacGinnis.** 2023, 21; **Genç, MacGinnis.** 2022, 88.

²³ **Grayson.** 1991, A.0.87.4, l. 5; A.0.87.10, l. 17; A.0.87.13, l. 3; A.0.87.15, l. 10.

մոտ 1109 թ., Երրորդը՝ Ք. ա. մոտ 1106-1095 թթ.: Հարկ է նշել նաև, որ ասորեստանյան աղքաների արձանագրությունների հայտնի դիվանում²⁴, Թիգլաթպալասար I-ի ընդարձակ տարեգրությունները, որտեղ հիշատակվում է Նահրին, արձանագրվել են՝ A.0.87.1-ը Ք. ա. 1109 թ., A.0.87.2-ը Ք. ա. 1104 թ., իսկ A.0.87.3-ը՝ Ք. ա. 1094/92 թ.²⁵:

Արձանագրությունները նկարագրում են, թե ինչպես է Ասորեստանի արքան անցել դժվար տեղանքով և զաղթափ լեռներով: Նա ըստ Երևոյթին անցել է Բիթլիսի լեռնանցքով, հատել է Տավրոսի լեռնաշղթան, ապա դուրս եկել Վանա լճի ավազան: Թիգլաթպալասար I-ը պնդում է, որ Ք.ա. մոտ 1112 թ. իր Նահրյան առաջին ուազմարշավի ընթացքում ջախջախել է 23 Նահրյան թագավորների միությանը՝ «(IV, 90) ... Ես նրանց ուազմիկների դիակները ցորենի կույղերի պես փոեցի իրենց երկրում²⁶, լեռների հարթավայրերում և նրանց քաղաքների մերձակայքում: Ես գրավեցի (IV, 95) մարդում նրանց 120 մարդակառքերը՝ իրենց հանդերձանքով հանդերձ (և) Նահրի երկրների 60 թագավորների, այդ թվում՝ նրանց օգնության հասածներին, (IV, 100) Ես նեղասլաքով հեղապանեցի մինչև Վերին ծովը: Ես նվաճեցի նրանց մեծ քաղաքները (և) դուրս քերեցի (V, 1) նրանց ավարը, հարսկությունը (և) ունեցվածքը: Ես հրդեհի մարդնեցի, ավերեցի (և) հողին հավասարեցրի,

²⁴ Grayson. 1991.

²⁵ Shibata. 2023, 168.

²⁶ Տառացի նշվում է «բաց երկրում», ինչը հայերեն հնարավոր է թարգմանել նաև «բաց երկնքի դակ»:

նրանց քաղաքները (և) վերածեցի ավերակների բլուրների»²⁷:

Ասորեստանի արքան գերի ընկած նահրյան թագավորներին նրանց հպատակությունն ու տուրքը ընդունելուց հետո ազատ է արձակել²⁸: Նահրյան երկրներից նա հարկել է 1200 ձի և 2 հազար խոշոր եղջերավոր անասուն²⁹: Նահրյան թագավորների վերոնշյալ 23 թիվը, սակայն զգալիորեն ավելի քիչ է, քանզի քիչ անց արքան խոսում է նահրյան 60 թագավորների մասին³⁰: Այս ամենը կարող է ենթադրել, որ կա’մ առաջին բախումն իր աշխարհագրական տիրույթով ավելի սահմանափակ է եղել, կա’մ մեկ վճռական ճակատամարտով ասորեստանցիների առաջխաղումը կասեցնելու համար՝ նահրյան համադաշնությունն է միավորել իր ուժերը: Միայն այս կերպ կարելի է բացատրել 23 թվից հետո 60-ի հիշատակումը: Այստեղ մնում է համաձայնել, որ մնացած 37 թագավորները Նահրյան երկրների հիմնական 23 թագավորներին օգնության եկած դաշնակիցներն են³¹, որոնք, ըստ արձանագրության, նախապես տեղեկացված են եղել ու հնարավորություն են ունեցել ճակատամարտի համար պատրաստություններ տեսնել:

Բավականին հետաքրքիր է նաև դեպի Հայկական լեռնաշխարհ ու նրա մատուցներ արշավող ասորեստանյան

²⁷ **Grayson.** 1991, A.0.87.1.

²⁸ **Grayson.** 1991, A.0.87.1, col. IV, l. 43- col. V, l. 21.

²⁹ **Grayson.** 1991, A.0.87.1, col. V, l. 19.

³⁰ **Grayson.** 1991, A.0.87.1, col. IV, l. 96; **Jakob.** 2017, 135.

³¹ **Արցունյան.** 1970, 43-44.

բանակի նկարագրությունը: Ակնհայտ է, որ մարտավարական տեսանկյունից՝ ասորեստանցիներն օգտագործել են բանակի գրեթե ողջ զինանոցը: Ճակատամարտերից զատ, տարեգրության մեջ խոսվում է նաև քաղաքների ու ամրոցների պաշարման մասին: Դրանից կարելի է ենթադրել, որ Նախյան համադաշնության դեմ արշավանքի ժամանակ ասորեստանցիները կիրառել են նաև պաշարողական մեթենաներ: Ասորեստանյան բանակում մեծ նշանակություն ունեին նաև մարտակառքերը «իմ մարդակառքերն ու բանակը պապրասպության մեջ դրեցի»³²: Այս գորատեսակը տարեգրությունների մեջ հաճախ է հիշատակվում, և ինչպես երևում է ասորեստանյան արքաների տեքստից՝ բավականին արդյունավետ է կիրառվել ճակատամարտերում: Սակայն, պետք է արձանագրել, որ Հայկական լեռնաշխարհի հարավյախն լեռնային հատվածները պետք է, որ սահմանափակեին մարտակառքերի ակտիվ տեղաշարժերն ու գործողությունները «...երբ ճանապարհը հարթ էր՝ կառուվ էի, և երբ ճանապարհը դժվար էր և հզոր լեռների խորդուրդը դեղանքով՝ ես ոդքով էի անցնում»³³: Բայց արձանագրված են նաև դեպքեր, երբ արքան թողել է մարտակառքերը և առաջ շարժվել. «Արումա լեռան վրա, դժվարին դեղանքում, որն անանցանելի էր իմ կառքերի համար, ես թողեցի կառքս: Վերցնելով իմ մարդիկներին՝ ես հաղթական սահում էի ... վրանգավոր լեռնաշղթաների

³² Grayson. 1991, A.0.87.1, col. I, l. 71.

³³ Grayson. 1991, A.0.87.1, col. II, ll. 70-72.

երկայնքով»³⁴: Իսկ մեկ այլ տեղ՝ «Սուր դաշույնների պես դուրս ցցված բարձր սարերի մեջ, որոնք անանցանելի էին իմ կառքերի համար, ես կառքերը դրեցի (զինվորների) պարանոցին (և այսպես) անցա դժվարին լեռնաշղթայի միջով»³⁵:

Ենելով այն հանգամանքից, որ ասորեստանյան զինված ուժերի վերաբերյալ (և ոչ միայն) արքաների տարեգրություններում, որպես կանոն, հիմնականում «սրանդարդացված» արտահայտություններ են, դժվար է ասել Հայկական լեռնաշխարհ արշաված ռազմիկների ստույգ թիվը: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ ըստ Թիգլաթպալասար I-ի տարեգրության, նա իր հետ ունեցել է 30 մարտակառք, որոնք սովորաբար ուղեկցում էին արքային՝ «*ina 30 GIŠ.GIGIR.MEŠ (išnarkabatī)-ia əlikət̪ idi gamarrija erjūte*»³⁶: Պնդելի է, որ Ասորեստանի արքան Հայկական լեռնաշխարհ արշավանքի ժամանակ իր հետ ունեցել է ոչ ավել քան 2-3 տասնյակ հազար զինվոր: Բավականին ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Թիգլաթպալասար I-ը գրեթե միշտ շեշտում է ասորեստանցի զինվորի արհեստավարժությունն ու պատրաստվածությունը, որոնք իբր գրեթե միշտ վճռորոշ դեր են ունեցել ասորեստանցիների հաղթանակներում՝ «*qurādīja ša mit̪ihs dabdē litamdu - nyleber h̪imkroliθyoiններ ունեին (վարժված էին) մերձամարդում*»³⁷:

³⁴ Grayson. 1991, A.0.87.1, col. II, ll. 72-76.

³⁵ Grayson. 1991, A.0.87.1, col. III, ll. 43-46.

³⁶ Grayson. 1991, A.0.87.1, col. II, ll. 64-66.

³⁷ Grayson. 1991, A.0.87.1, col. II, ll. 66-67.

Հայկական լեռնաշխարհից տարված ավարի վերաբերյալ Թիգլաթպալասար I-ը նշում է նաև, որ Աղադ աստծոն համրս-տաճարի համար Նահրիի Երկրների լեռներից տարել է օբսիդիան, հալտս-քար (ըստ Երևույթին ալունիտ³⁸) և հեմատիտ³⁹:

Նահրիյան Երկրների զբաղեցրած տարածքը ռազմավարական մեծ նշանակություն ուներ ասորեստանցիների համար. 1) Հայկական լեռնաշխարհը հարուստ է արժեքավոր բնական օգտակար հանածոներով, մասնավորապես՝ մետաղներով (պղինձ, անագ, երկաթ և այլն), հրաբխային ծագման բազում ապարներով, փայտանյութերով, խոշոր եղջերավոր անասուններով, ձիերով, և այլն⁴⁰: 2) Հայկական լեռնաշխարհի հարավային լեռնանցքները⁴¹ ծառայել են որպես Ասորեստան ներխուժման հնարավոր ուղիներ: Ուստի, այդ լեռնանցքների վերահսկողությունը Ասորեստանի համար դառնում էր անվտանգության առաջնահերթություն: 3) Տեղական կառավարիչների նկատմամբ գերիշխանության ամրագրմամբ և նրանց վասալական կախման մեջ գցելով: 4) Թագավորական պատանդներ վերցնել՝ շարունակական հավատարմությունն ապահովելու համար: 5) Զանգվածային տեղահանությունների արդյունքում մարդկային ռեսուրսների ծեռք քերում և նրանց վերաբնակեցում Ասորեստանում: 6) Հաղթական կոթողի կանգնեցումը ի փաստումն Ասորեստանի ազդեցության հյուսի-

³⁸ **Bobokhyan.** 2008, 115; **Faist.** 2001, 43-46.

³⁹ **Grayson.** 1991, A.0.87.1, col. VIII, ll. 11-16.

⁴⁰ **Bobokhyan.** 2008, 114-115, 145-146; **Faist.** 2001, 30, 43-46, 63, 67-68.

⁴¹ **Radner.** 2009; **Sargsyan.** 2022.

սարևմտյան սահմանի⁴²:

Եզրակացություններ

Զարգացնելով իր առաջխաղացումը հյուսիսում՝ Թիգլաթպալասար I-ը շարժվեց դեպի Եփրատյան գոտի: Նա Խաթթիում գտնվող Կարքեմիշ քաղաքի մոտ բախվեց արամեական ախլամու կոչվող ցեղերի հետ⁴³, իսկ Ք.ա. մոտ 1107 թ. Ասորեստանի արքան արշավեց Իշուվայի դեմ և գրավեց նրանց քաղաքները, որոնք արծվի բների պես կառուցված էին լեռների գագաթներին: Նա գրավեց, կողոպտեց և ավերեց Իշուվայի 25 քաղաք: Եվ գրեթե ինչպես միշտ, արշավանքի պատճառը Իշուվայի անհնազանդությունն էր: Ապա և շարժվեց դեպի Թարալ:

Թիգլաթպալասար I-ի հյուսիսային տարածքների վրա արշավանքներն իրականում էպիգրաֆին բնույթ ունեին, իսկ դրանցում ասորեստանցիների վերահսկողությունը՝ համեմատարար կարճատև էր: Սակայն այն նշանակալից էր ասորեստանյան ծավալապաշտական գաղափարախոսության տեսանկյունից: Այս արշավանքները, փաստացի ծառայում էին մի քանի համընկնող նպատակների՝ ապահովելով անհրաժեշտ հանածոների ու այլ ռեսուրսների հասանելիությունը, դրանք ստեղծում էին բուժերային գոտի՝ պաշտպանելով Ասորեստանի կենտրոնը և ամրացնելով արքայի կերպարը՝ որպես աստվածների սիրելիի, նրանց կամքը կատարողի և նրանց կողմից արտոնված նվաճողի:

⁴² Sargsyan. 2022.

⁴³ Graysong. 1991, A.0.87.1, col. V, ll. 44-98.

Գրականություն/References/Литература

1. **Ցականյան Ռ.** 2018, Միջին Ասորեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ, ԳԱԱ ԱԻ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, հ. XXXI, էջ 19-33:
Tsakanyan R. 2018, On Some Foreign and Domestic Policy Issues of Middle Assyrian Empire, Institute of Oriental Studies NAS RA, The Countries and Peoples of the Near and Middle East, Yerevan, № XXXI, pp. 19-33.
2. **Ցականյան Ռ.** 2023, Աշուրի պետությունը մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. XV դարի վերջերը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, № 2 (27), էջ 5-22:
Tsakanyan R. 2023, The State of Aššur from the Beginning of the 3rd Millennium BC to the End of the 15th Century BC., The Shirak Center for Armenological Studies of NAS RA, "Scientific Works", № 2 (27), pp. 5-22.
3. **Ցականյան Ռ.** 2023, Ասորեստանի արքա Թուկուլտի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1242-1206 թթ.) նահիյան արշավանքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 157-175:
Tsakanyan R. 2023, The Nairian Campaign of the Assyrian King Tukulti-Ninurta I (1242-1206 BC)), "The Herald of Social Sciences", № 2, էջ 157-175.
4. **Քոսյան Ա.** 1999, Մ.թ.ա. XII դարի Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, Զանգակ-97, 264 էջ:
Kosyan A. 1999, The XII Century B.C. Near Eastern Crisis and the Armenian Highland, Yerevan, Zangak-97, 264 p.

5. **Քոսյան Ա.** 2022, Խեթական թագավորություն (քաղաքական պատմություն), Երևան, «ՀԱԱ Արևելագիտության ինստիտուտի հրատ.», 252 էջ:
Kosyan A. 2022, The Hittite Kingdom (Political history), Yerevan, Institute of Oriental Studies NAS RA, 252 էջ.
6. **Քոսյան Ա., Գրեկյան Ե.** 2024, Հայկական լեռնաշխարհի միջավայրային պատմությունը. շրջակա միջավայր, կլիմայական փոփոխություններ և քաղաքակրթական գործընթացներ (Ք.ա. X-I հազարամյակներ), Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 408 էջ:
Kosyan A. Grekyan E. 2024, The Environmental History of the Armenian Highland: Natural Environment, Climate Changes, and Civilizational Processes (X-I Millennia BC)), Yerevan, Institute of Archaeology and Ethnography, 408 p.
7. **Арутюнян Н.** 1970, Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, Ереван, изд. Академии наук Армянской ССР, 474 с.
Harutyunyan N. 1970, Biainili-Urartu the History of Wars and Politics, and Questions of Place-Name Studies, Yerevan, National Academy of Sciences, 474 p.
8. **Bobokhyan A.** 2008, Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500-1500 v. Chr., Bd. 1-2, Oxford: Hedges, 674 P.
9. **Bryce T.** 2012, The World of the Neo-Hittite Kingdoms: A Political and Military History, Oxford: Oxford University Press, XIII+356 P.
10. **Diakonoff I.** 1984, The Pre-history of the Armenian People, Delmar, New York, 241 P.
11. **Faist B.** 2001, Der Fernhandel des assyrischen Reiches zwischen dem 14. und 11. Jahrhundert v. Chr. (AOAT

- 265), Ugarit-Verlag, Münster, xxii + 322 P.
12. **Genç B., MacGinnis J.** 2022, A Text of Shalmaneser I from Üçtepe and the Locaion of Šinamu, *Anatolian Studies*, vol. 72, pp. 79-95.
 13. **Genç B., MacGinnis J.** 2023, The Assyrian Rock Relief at Yağmur (Evrihan) in the Tur Abdin, Oxford, Archaeopress, Pp. iii+46.
 14. **Grayson A. K.** 1987, The Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC), *The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods*, Vol. I, Toronto-Buffalo-London. XXII+355 P.
 15. **Grayson A. K.** 1991, Assyrian Rulers of the Third and Second Millennia BC I (1114-859 BC), *Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods* 2, Toronto, Buffalo and London: University of Toronto Press, XXII + 425 P.
 16. **Jakob S.** 2017, The Middle Assyrian Period (14th to 11th Century BCE), In Frahm, E. (ed.), *A Companion to Assyria*. Malden, MA: Wiley-Blackwell, pp. 117-142.
 17. **Kosyan A.** 1997, The Mushki Problem Reconsidered, *Studi Micenei ed Egeo-Anatolici*, vol. 39, issue 2, pp. 253-266.
 18. **Kosyan A.** 2023, Migrations in the Armenian Highland (the Mushki Problem), *Fundamental Armenology*, № 1 (17), pp. 20-35.
 19. **Liverani M.** 2013, *The Ancient Near East: History, Society and Economy*, Routledge, 648 p.
 20. **Mayer W.** 1995, *Politik und Kriegskunst der Assyrer*, Münster, Ugarit-Verlag, XV+ 545 pp., Faltkarte.
 21. **Radner K.** 2006, How to Reach the Upper Tigris: The Route Through the Ḥūr ‘Abdīn, *State Archives of Assyria Bulletin*, vol. 15, pp. 273-305.
 22. **Radner K.** 2009, Die assyrischen Reliefs und Inschriften, in: Schachner A. (ed.), *Assyriens Könige an einer der*

- Quellen des Tigris. Archäologische Forschungen im Höhlensystem von Birkleyn und am sogenannten Tigris-Tunnel, Istanbuler Forschungen, Bd. 51, Tübingen, Ernst Wasmuth Verlag, pp. 172-223.
- 23. **Reculeau H.** 2022, Assyria in the Late Bronze Age, The Oxford History of the Ancient Near East, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 3: From the Hyksos to the Late Second Millennium BC. Oxford, pp. 707-800.
 - 24. **Salvini M.** 1998, Nairi, Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie, Band 9, Walter de Gruyter, Berlin-New York, pp. 87-91.
 - 25. **Sargsyan V.** 2022, C. F. Lehmann-Haupt's Studies on Assyrian Inscriptions of the Armenian Highland, Bulletin of the Institute of Oriental Studies, № 2/1, pp. 13-21.
 - 26. **Shibata D.** 2023, Assyria from Tiglath-pileser I to Ashurnasirpal II, The Oxford History of the Ancient Near East, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 4: The Age of Assyria. Oxford, pp. 161-351.
 - 27. **Tsakanyan R.** 2023, The Nairian Campaign of Tukulti-Ninurta I (1242-126 BC) in the Context of the Conquests in the First Three Years of his Reign, Journal of Ancient History and Archaeology, № 10/1, pp. 5-9.
 - 28. **Wittke A.-M.** 2004, Mušker und Phryger. Ein Beitrag zur Geschichte Anatoliens vom 12. bis zum 7. Jh. v. Chr. (= Beihefte zum Tübinger Atlas des Vorderen Orients B Geisteswissenschaften 99). Wiesbaden: Reichert, xvi+389 S., 2 Kt.

**Руслан А. Цаканян, Институт Востоковедения НАН РА,
к.и.н., Северные походы Тиглатпаласара I: цели и результаты**

Резюме

В период правления Тиглатпаласара (Tukultī-apil-Ešarra) I (1114–1076 гг. до н. э.), одного из последних могущественных царей Среднеассирийского государства (ок. последней четверти XV в. до н. э. — первой половины X в. до н. э.), безопасность его северных и северо-западных границ имела для государства большое стратегическое значение. В результате анализа клинописных источников предпринята попытка реконструировать стратегические и экономические цели его походов на Армянское нагорье и в восточную часть Малой Азии, а также раскрыть их историческое значение. Северные походы Тиглатпаласара I представляли собой продуманную завоевательную стратегию, направленную на обеспечение торговых путей, доступа к ценным ресурсам и установление господства Ассирии над малыми и средними государствами региона.

Ключевые слова: Средняя Ассирия, Тиглатпаласар I, Армянское нагорье, Верхний Евфрат, военный поход, Наири, мушки.

**Ruslan A. Tsakanyan, Institute of Oriental Studies NAS RA,
Ph.D in History, The Northern Campaigns of Tiglath-Pileser I:
Objectives and Results**

Summary

During the reign of Tiglath-Pileser (Tukultī-apil-Ešarra) I (1114–1076 BC), one of the last powerful kings of the Middle Assyrian Empire (c. the last quarter of the 15th century BC – the first half of the 10th century BC), the security of its northern and northwestern borders was of

great strategic importance to the state. An analysis of cuneiform sources has made it possible to reconstruct the strategic and economic goals of his campaigns in the Armenian Highlands and in eastern Asia Minor, as well as to reveal their historical significance. The northern campaigns of Tiglath-Pileser I were a well-thought-out strategy of conquest aimed at securing trade routes, access to valuable resources, and establishing Assyria's dominance over the small and medium-sized states of the region.

Key words: Middle Assyri, Tiglath-pileser I, Armenian Highland, Upper Euphrates, military campaigns, Nairi, Mushki.